«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը մայրենիի դասավանդման ընթացքում

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ Անահիտ Ղազարյան/դասվար/

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Ախթալայի թիվ 1 միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն----------3 -4

Գրական ակնարկ----------4-10

Գլուխ 1. Ուսուցչի դերը արժեհամակարգի

ձևավորման գործընթացում ----------10-13

Գլուխ 2. Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը

առարկայի դասավանդման ընթացքում----------14-18

Գլուխ 3. Արժեքային համակարգի դասավանդման օրինակ ----------19-21

Եզրակացություն----------21-22

Գրականության ցանկ ----------23

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Թեմայի կարևորությունը: Թեման բավական կարևոր է, քանի որ ճիշտ արժեհամակարգ ձևավորելը շատ կարևոր գործընթաց է: Դաստիարակենք արժանապատիվ, ազնիվ և հայրենասեր սերունդ՝ կունենանք առողջ հասարակություն և պետականության ամուր հիմքեր, բաց թողնենք ճիշտ արժեքների սերմանումը՝ կունենանք վատ հասարակություն: Սա է պատճառը, որ արժեքային համակարգի դասավանդումը շատ կարևոր է:

Աշխատանքի նպատակը: Աշխատանքում նպատակ է դրվել վեր հանել արժեքային համակարգի կարևորությունը, ուսումնասիրել և ներկայացնել սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը տարրական դասարաններում և առանձնացնել դասավանդման առավել արդյունավետ մեթոդները: Աշխատանքում ներկայացված է ուսուցչի դերը տվյալ դասավանդման գործընթացում, ինչպես նաև դասի՝ պլան արժեքային համակարգի դասավանդման մեթոդիկայով և դասի ընթացքում օգտագործվող հետաքրքիր հնարներով:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, գրական ակնարկից, հիմնական նյութից որը բաղկացած է երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Դեռևս մ.թ.ա.460-400 ապրած ու ստեղծագործած հույն պատմաբանԹՈՒԿԻԴԵՍը ասել է.<<**Շատ առաջ կգնա նա,ով չի զիջում իրեն հավասարին, պահպանում է արժանապատվությունը ուժեղագույնի նկատմամբ ու կարողանում է մեծահոգի լինել անպաշտպանների հանդեպ>>:** Անցել է մոտ 2500 տարի և մեծ մտածողի խոսքերը արդիական են մինչև այսօր: Ֆրանսիացի գրող ԺՈՐԺ ՍԱՆԴը (1804-1876) ասել է.**<<Արժանավորը նա է,ով ամենից առավել զեղեցիկ է մտածում և գործում>>:**Ցանկացած դարաշրջանում այս միտքը արդիական է ու իմաստալից: Մեծ մտածող իմաստակ ԿԱՐԼ ՄԱՐՔՍը սահմանել է ,թե ինչ է արժեքը.**<<Արժանիքը հենց այն է ,ինչը ամենից շատ է բարձրացնում մարդուն,ինչը նրա գործունեությանը,նրա բոլոր ձգտումներին հաղորդում է բարձրագույն ազնվություն>>:** Մեր գործերը,մեր արարքները,մեր ձգտումներն ու վարքագիծն են որոշում ,թե մարդու որակական չափանիշների սանդղակի բարձրության որ մակարդակում ենք գտնվում մենք: Ապագայի քաղաքացին,հայրենիքի նվիրյալը,գիտնականն ու հմուտ մասնագետներն այսօրվա դպրոցականներն են և մեր

երկրի ,մեր հայրենիքի ,մեր պետության ու մեր սերունդների ապագան կախված է նրանից ,թե ինչ արժեհամակարգային կրթություն է ստանում այսօրվա դպրոցականը:Կրթությունը պետք է լինի այնպիսին,որ մենք ունենանք իրական արժեքներ, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտություններ: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձևավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ և ամենաիմաստալից կրթական համակարգը:Այդ գործում շատ մեծ աշխատանք ունենք կատարելու մենք՝ հանրակրթության ոլորտի աշխատողներս:

Գրական ակնարկ

Արժեք բառը առաջացել է ֆրանսերեն **<<valir>>**-արժանի լինել բառից: Արժեքը ինչ-որ բանի կարևորությունն է ,նշանակությունն ու օգտակարությունը : Հայերենի հոմանիշների բառարանում արժեք բառի հոմանիշներն են գին, գնահատանք, արժանիք: Բոլոր դեպքերում <<արժեք>> հասկացությանը տրվում է կարևորի, նշանակալիի մեկնաբանություն 1. Արժողություն, արժեգին, սակագին, գին, արժողչեք (հզվդ.): 2. Նշանակություն, կարևորություն: 3. Հարգ, դադր (բրբ-): Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձևակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը:

Արժեքն երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք եւ այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է:Հնարավոր չէ

պատկերացնել կյանքը առանց սիրո .սեր մերձավորի նկատմամբ,սեր հայրենիքի նկատմամբ,սեր ազգային արժեքների ու ...

Կամ պատկերացնել կյանքը առանց գթասրտության,առանց պատասխանատվության,առանց հայրենասիրության,առանց արդարամտության առանց....

Հեշտ, առանց կորուստների և հաղթահարումների ապրելը երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման:Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում:Նորմերը տարբեր են քաղաքում եւ գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, և որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձեւավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին և բերում է դրանց քայքայման: Երբ չկան արժեքներ մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերտները սովորում են համապատասխանել դրանց: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ, և՛

ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Անընդհատ վերափոխվող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումներն ու նրանց փոխանցման մեթոդները: Հետևաբար նոր մոտեցումներ մշակելու խնդիր է ծագում, անհրաժեշտություն է առաջանում յուրացնելու ժամանակակից մշակութային միջավայրը ձևավորող մշակութային ժառանգության բանալիները: Այս հանգամանքն ավելի է բարդացնում ազգային արժեքների պահպանության խնդիրը, որի լուծման հարցը դրված է ինչպես պետության, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու առջև: Ինչպիսի՞ն է ժամանակակից սերունդը, ի՞նչ պահանջմունքներ, հետաքրքրություններ ունի, ինչպիսի՞ արժեհամակարգով է առաջնորդվում: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները: Մեր սերունդներն օղակ են անցյալի ու ապագայի միջև և ապահովում են ինչպես տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը, այնպես էլ՝ փոփոխումը և փոխանցումը հաջորդ սերունդներին: Անկախացման տարիներին Հայաստանին պատուհասած երկրաշարժը, Արցախյան գոյամարտը, սոցիալտնտեսական ճգնաժամը և քաղաքական արտաքին ու ներքին բազում գործոններ, ինչպես նաև Արցախյան պատերազմում պարտությունը ունեցան իրենց տխուր հետևանքները՝ պարարտ հող ստեղծելով բացասական տարաբնույթ երևույթների աշխույժ գործունեության համար: Նման մարտահրավերների առկայության պայմաններում երիտասարդ սերնդի՝ նախնիներից ժառանգած արժեհամակարգի մասին մակերեսային գիտելիքների կամ բացարձակ չիմացության հետևանքով ազգային արժեքները հաճախ մղվեցին երկրորդական պլան. դյուրին և հեշտընկալ դարձան համաշխարհայնացման կործանարար պահանջները: Վերջիններս բացասական ազդեցություն ունեցան երիտասարդ սերնդի ինքնության, կենսակերպի ու արժեհամակարգի վրա: Ի տարբերություն նախորդ դարաշրջանի՝ մերօրյա ազգային առաքինություններից շատերն այլ ընկալում են ձեռք բերել, փոխվել են նաև արժեքային

պատկերացումները: Շատ կարևոր է ընտանիքի դերը:Ընտանիքը ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի մշակույթի կրողն է, այլև փոխանցողը: Ներընտանեկան ավանդույթներն ու սովորույթներն օգնում են հայեցի դաստիարակություն տալ գալիք սերունդներին՝ նրանց մեջ ձևավորելով ազգային ինքնագիտակցության ոգի:Մեծ է ընտանիքի դերը ազգային ինքնագիտակցության, մայրենի լեզվին տիրապետելու, պապենական արմատները ճանաչելու, Հայ առաքելական եկեղեցու պատկանելության և ազգային սովորույթների պահպանման գործընթացներում: Ընտանիքում է երեխան առաջին անգամ հաղորդակցվում մշակութային արժեքներին, յուրացնում հասարակական վարքագծային նորմեր, կանոններ, իրականացվում երեխայի առաջնային սոցիալականացումը, հարմարումը կյանքին: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր ժամանակաշրջան առանձնանում է իր սերնդին բնորոշ առանձնահատկություններով, նախասիրություններով, կողմնորոշումներով, և ավագ սերնդի կողմից ընդունված հասարակական կյանքի որոշ նորմեր կարող են տարբերվել հաջորդ սերնդի հայացքներից: Վերջիններս արագ հարմարվում են նոր իրավիճակին՝ ձևավորելով արժեքային նոր համակարգ, որը արմատապես կարող է տարբերվել նախորդից: Ինչ խոսք, հասարակությունը չի կարող զարգանալ միայն պահպանողականության հիմքի վրա, քանի որ անընդհատ գալիս է նորը՝ համալրելով եղած արժեքները: Պարզապես քայլելով ժամանակին համընթաց, հաղորդակից լինելով համամարդկային արժեքներին՝ անհրաժեշտ է առաջնայնությունը տալ ազգայինին: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Այս խնդրում որպես գործիքակազմ մեծ

դերակատարություն ունի ժողովրդական բանահյուսությունը՝ իր ժանրային բազմազանությամբ, որը կարող է երիտասարդ սերնդի ազգային ինքնության, բարոյական դաստիարակության գործընթացը դարձնել առավել արդյունավետ՝ հաշվի առնելով նրա ունեցած բարոյադաստիարակչական մեծագույն արժեքը: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից սերնդին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները: Մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը:Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը.դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը:Ըստ սրա՝աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ,այսինքն՝նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ,ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Անշուշտ այս երկու մոտեցումներն էլ խոցելի կողմեր

ունեն:Առաջինը երբեմն զուտ քարոզչական և ձևապաշտական բնույթ է ձեռք բերում. երեխաները լսում են,թե որքան լավ բան է ազնվությունը,արդարությունը,տարեցների նկատմամբ հոգատարությունը և այլն,սակայն կյանքում տեսնում են արժեքների խախտումն իրենց շրջապատողների կողմից:Բնական է,որ այդ դեպքում դրանք վերացական արժեքներ են մնում և նրանց կերպարի մաս չեն դառնում:Մյուս կողմից էլ՝ նոր մոտեցումը շատ ազատական է, և վտանգ կա, որ անձնական ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը կտրվի առաջինին: Ուստի երեխաների մեջ համապատասխան արժեքներ ձևավորելու համար շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը:Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական,պատմական հերոսների օրինակով,նաև ուսուցչի վարքագծով:Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին,ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը:Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն,այսինքն՝աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը,զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու,ընկերների հետ քննարկելու,դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին,գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը:Աշակերտներին հարց է ուղղվում՝ինչը դուր եկավ,ինչը դուր չեկավ,ինչ կարծիք ունեն,ինչ վերաբերմունք կդրսևորեն,ինչպես կվարվեին իրենք:Եվ նա ազատ է իր կարծիքը հայտնելու.: Մյուս կարևոր սկզբունքն այն է,որ արժեքը պետք է սովորել ոչ թե լսելով,այլ կիրառելով:Ուստի պետք է նրանց հնարավորություն տալ կիրառելու իրենց սովորած արժեքը,այն ձեռք բերել իրենց իսկ փորձառության հիման վրա:Դրա համար,անշուշտ, պետք է ընտրել գործունեության այնպիսի ձևեր,որոնք համապատասխանում են երեխաների տարիքին: Շատ կարևոր է նաև խրախուսանքը:Խրախուսելով երեխային կարելի է ոգեշնչել,մղել որոշակի գործողությունների,ազդել նրա զգացմունքների վրա և այդպես նպաստել նրա մեջ որոշակի արժեքի ամրապնդմանը: Միջնակարգ կրթության բովանդակությունը կազմում են հանրակրթության ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված և սովորողի կողմից յուրացման համար նախատեսված գիտական

գիտելիքները, մանկավարժորեն և հոգեբանորեն չափորոշված-հարմարեցված սոցիալական փորձը, մշակութային, բարոյական և գեղագիտական, ազգային և համամարդկային արժեքները:

Ակնթարթն էլ բավական է ,

որպեսզի հերոս դառնաս,սակայն մի ամբորջ կյանք է հարկավոր ,որ դառնաս արժանավոր մարդ:

Բրյուլա Պոլ 1866—1940 ֆրանսիացի գրող

Գլուխ 1. Ուսուցչի դերը արժեհամակարգի ձևավորման գործընթացում

1. 1. Ուսուցչի դերը ավելի բազմաբովանդակ է, քան միայն դաս տվող

Մեր օրերում էականորեն փոխվել է ուսուցչի դերը հասարակության մեջ:Մանկավարժական գիտությունը մեծ ուշադրություն է դարձնում ուսուցչի դերի լիարժեք կայացմանը, որի մեջ մտնում են ուսուցչի մասնագիտական ունակությունները, կարողությունները, հմտություններն ու էթիկան: Ուսուցիչը երկու դեր է կատարում աշակերտի կյանքում: Առաջին՝ նրա մարդ ձևավորելու գործում, և երկրորդ՝ նրա կրթության հարցում: : Ուսուցչի աշխատանքը բոլոր ժամանակներում էլ եղել է հարգված ու պահանջված աշխատանք: Ոչինչ երբեք չի կարող փոխարինել ուսուցիչ-դաստիարակին, նրա մանկավարժական վարպետությանը, կուլտուրային և իհարկե ամենակարևորին՝ հեղինակությանը, որը պայմանավորված է նրա թե՛ անձնային,թե՛ մասնագիտական որակներով:Նրա դերից և աշխատանքի որակից է կախված, թե վաղն ինչ անհատներ կյանք կմտնեն,ինչ արժեհամակարգով և ովքեր կձևավորեն մեր հանրությունը՝ որոշելով պետության ապագան: Շատ կարևոր է նաև ուսուցչի մարդ տեսակը, նրա վարքագիծը, քանի որ նա վառ օրինակ է հանդիսանում աշակերտի համար:Կյանքն ավելի բարձր է խոսում, քան խոսքերը:

Ուսուցչի դերը բազմազան է։ Մեզանում ուսուցիչը սովորաբար ընկալվում է որպես սովորեցնող՝ ակադեմիական գիտելիքը մեխանիկորեն փոխանցող անձ։ Հաճախ նույնիսկ կիրառվում է ոչ թե ուսուցիչ, այլ՝ դասատու բառը. այսինքն՝ ուսուցիչը ընկալվում է նույնիսկ ոչ թե որպես սովորեցնող, տեսական և գործնական հմտություններ փոխանցող, այլ ընդամենը դաս տվող, վարժեցնող անձ (հատկանշական է, որ նախկինում տարածված էր վարժապետ եզրույթը, որն այժմ կիրառվում է ծաղրանքի համատեքստում)։

Ըստ էության, տեղի է ունեցել ուսուցչի դերի աղավաղում ծնողների, աշակերտների և լայն հասարակության ընկալումներում։ Մինչդեռ ուսուցչի դերն ավելի բազմազան ու բազմաբովանդակ է, քան պարզապես դաս տվողի, ինչ-որ բան սովորեցնողի դերը։

Եթե դիտարկենք ուսուցչի կամ ընդհանրապես դպրոցի դերը երեխայի կրթության իրավունքի իրացման հարցում, ապա թերևս որպես առաջին և ամենակարևոր դերերից մեկը կառանձնացնեի ուսուցչի կամ դպրոցի դերը՝ որպես սոցիալական հավասարակշռողի կամ հավասարակշռությունը պահպանողի։

Գաղտնիք չէ, որ Հայաստանի տարածքային անհամաչափ սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքում հասարակությունը ևս, իր սոցիալական բաղադրիչով, բազմաշերտ է։ Միևնույն դպրոցում կամ դասարանում սովորում են տարբեր սոցիալական տնտեսական կարգավիճակ ունեցող ընտանիքների կամ տարբեր կենսապայմաններում ապրող երեխաներ։ Հետազոտությունները վկայում են, որ ավելի լավ կրթություն ստացած ծնողների երեխաները առավել մեծ հավանականություն ունեն հաջողության հասնելու կրթության ասպարեզում, քան, օրինակ, այն երեխաները, որոնց ծնողները չունեն բարձրագույն կրթություն։

Տվյալ դեպքում, դպրոցը և ուսուցիչը պարտավոր են լրացնել ընտանիքի կամ ծնողների կրթվածության մակարդակի բացը՝ հավասարակշռելով և հնարավորություն տալով երեխային լիարժեք իրացնել կրթության իրավունքը։ Ուսուցիչը կարող է մեղմել նաև ընտանիքներում առկա անբարենպաստ հոգեբանական մթնոլորտի ազդեցությունը՝ օգնելով երեխային լիարժեք ներառվել թե՛ դասապրոցեսում, թե՛ հանրային կյանքում։ Պետության քաղաքականության մշակման տեսանկյունից սա շատ կարևոր է. այն պետությունները, որոնք ունեն սոցիալական արդարության տեսլական, հստակ քայլեր

են ձեռնարկում կրթության մեջ յուրանքանչյուր երեխայի կարիքների վերհանման և որակյալ հանրակրթությունը հատկապես խոցելի ընտանիքների երեխաների համար առավելագույնս մատչելի ու հասանելի դարձնելու համար:

Երեխայի խնամողին փոխարինողի դերը: Հաճախ դասապրոցեսում ուսուցիչը բախվում է բուն ակադեմիական կրթության հետ չառնչվող երևույթների, ինչպիսիք են, օրինակ, սովորողների միջանձնային կոնֆլիկտները, առանձին երեխաների՝ տվյալ պահի հուզմունքը կամ տարբեր պատճառներով պայմանավորված բարդ հոգեվիճակը, տրամադրության անկումը և այլն:

Այստեղ արդեն կարևորվում է ուսուցչի՝ ոչ այնքան կրթողի, որքան աջակցողի ու խնամողի դերը: Ուստի կարևոր է, որ ուսուցիչն ունենա անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ այդ դերը ստանձնելու և իրավիճակն արդյունավետ հասցեագրելու համար:

Ուսուցիչը՝ որպես ռեսուրսի աղբյուր: Տվյալ դեպքում որպես ռեսուրս կարելի է դիտարկել և՛ գիտելիքը, և՛ հմտությունները, և՛ կենսափորձը: Հաճախ ուսուցիչը երեխայի համար դառնում է հեղինակություն և շատ դեպքերում ավելի բարձր հեղինակություն, քան հենց երեխայի ծնողները: Շատ կարևոր է, թե ինչ աշխարհայացքի, ինչ արժեհամակարգի, ինչ ռեսուրսների կրող է ուսուցիչը և այդ ռեսուրսը երեխաներին փոխանցելու ինչպիսի հմտություններ ունի:

Շատ կարևոր է, որ ուսուցիչն ընդհանրապես զերծ լինի որևէ տեսակի կարծրատիպերից: Եթե ուսուցիչը, օրինակ, ունի կանխակալ վերաբերմունք որոշակի խմբի երեխաների նկատմամբ, ապա արդյունավետ ուսուցում, բնականաբար, չի ստացվի: Ունենք հետազոտություններ, որոնք վկայում են ուսուցիչների շրջանում գենդերային կարծրատիպերի առկայության մասին: Արդյունքում կրթության իրավունքի հավասար իրացման հնարավորությունների տեսակետից խոցելի են դառնում աղջիկները:

Օրինակ, ուսուցիչը մտնում է դասասենյակ՝ ի սկզբանե համարելով, որ կան ինչ-որ դերեր կամ մասնագիտություններ, որոնք բնորոշ են միայն աղջկան կամ միայն տղային, կամ, որ միայն տղան կարող է ունենալ մեծ ընկերական շրջապատ, պաշտոն զբաղեցնել կամ

որոշակի ոլորտում կարիերա անել, իսկ աղջիկը՝ ոչ: Լինելով նման գենդերային կարծրատիպերի կրողը և այդ կարծրատիպերով դասարան մտնելով՝ ուսուցիչն արդեն իսկ վտանգում է հավասարության և խտրականությունից զերծ սկզբունքի հիման վրա դասավանդումը:

Կարծրատիպերը կարող են լինել ոչ միայն գենդերային, այլև կրոնական, ռասայական, սոցիալական և այլն: Նույն կերպ, եթե ուսուցիչը դասասենյակ է մտնում ի սկզբանե կանխակալ վերաբերմունքով, օրինակ, ընտանեկան բռնության մեջ ապրող կամ հարբեցող ծնող ունեցող երեխաների նկատմամբ, ապա տվյալ խմբի երեխաները մարգինալացվում են դասասենյակում, և վտանգվում է նրանց կրթության իրավունքը: Ցավոք, ոչ միշտ են ուսուցիչների կողմից լիարժեքորեն ընկալվում իրենց՝ ռեսուրս կրողի կրողի և հավասարակշռողի դերերը:

Ուսուցչի՝ մոտիվացնող և քաջալերող դերը պակաս կարևոր չէ սովորողների հաջողության գործում: Մենք բոլորս էլ դպրոցում սովորելու տարիներին ունեցել ենք գոնե մեկ ուսուցիչ, որը մշտապես օգնել ու քաջալերել է մեզ՝ ավելի մեծ ձեռքբերումների և բարձունքների հասնելու համար: Նույնիսկ եթե առաջին հայացքից երեխան չի ցուցաբերում մեծ հետաքրքրվածություն կամ ակնհայտ ունակություններ այս կամ այն առարկայի նկատմամբ, դեռ չի նշանակում, որ նա ընդունակ չէ սովորելու կամ կրթվելու: Ուշադիր և քաջալերող դերը ստանձնած ուսուցիչը չի հանձնվի, այլ կշարունակի փնտրել հնարավորություններ՝ երեխային մոտիվացնելու և քաջալերելու սովորել, բացահայտել նոր աշխարհ: Դժվարությամբ սովորող, առարկայի ու ուսուցման նկատմամբ ակնհայտորեն ուշադրություն և հետաքրքրվածություն չցուցաբերող երեխաների առկայության պարագայում կարևոր է, որ ուսուցիչը անտարբեր չլինի և ժամանակին նկատի ու սահմանի խնդիրը, ծնողի և սովորողի հետ միասին նշագծի հաջողության և հավասարակշռողի դերերը:

Գլուխ 2 Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

<<Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակի ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում :

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի

ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն : Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ: Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ՝ արժեքներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը:

Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց

պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն, այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը:

Արժեքային համակարգի դաստիարակության տեխնոլոգիայի հեղինակն է Ա. Ի. Շեմշուրինան: Այս տեխնոլոգիան ուղղված է սովորողների բարոյական արժեհամակարգի ձևավորմանը: Հարկ է արձանագրել, որ դասագործընթացում են ակներև դառնում սույն տեխնոլոգիայի կիրառման վերջնարդյունքները, քանզի

առարկան ամբողջությամբ՝ իր դաստիարակչական ներուժով հանդերձ սովորողների բարոյական արժեհամակարգի ձևավորման հզոր գործոն է: Այս նկատառումներից ելնելով էլ սահմանվել են բարոյական դաստիարակության տեխնոլոգիայի հայեցակարգային դրույթներն ու արժեքային կողմնորոշիչները: Դրանք են՝

• սովորողների մոտ հայրենասիրության դաստիարակումը,

• սովորողների քաղաքացիական գիտակցության ձևավորումը,

• սովորողների իրավունքների և պարտականությունների համակարգումը,

• սովորողների մոտ բնության և շրջապատող աշխարհի հանդեպ խնայողական և հանդուրժող վերաբերմունքի դաստիարակումը:

Դասագործընթացում դաստիարակչական խնդիրների լուծման տեխնոլոգիաները ներառում են հետևյալ համակարգաձևավորող բաղադրիչները.

_ Դասի նպատակադրում, թեմայի մատուցման փոխներգործուն մեթոդների և օժանդակող միջոցների նախագծում,

_ Դասատեսակի ընտրություն և նրա կառուցվածքային տարրերի համակարգում,

_Սովորողների միջև համագործակցային բնույթի աշխատանքների կազմակերպում,

_ Սովորղների իմացական և ճանաչողական գործունեության խթանում,

_ Սովորողների հույզերի կառավարում, զգացմունքների ղեկավարում և վարքի դրսևորման ձևերի վերահսկում:

Արժեքային համակարգի ձևավորման դասագործընթացում դաստիարակչական խնդիրների լուծման տեխնոլոգիաների բովանդակությունը ներառում է՝

1. առաջացած դաստիարակչական իրավիճակի վերլուծությունը, լուծման ուղիների որոնումը,

2. մանկավարժական աջակցությունը,

3. հաջողության դիրքորոշման ստեղծումը:

Արժեքային համակարգի ձևավորման դասագործընթացում առաջացող դաստիարակչական խնդիրների լուծման գործընթացում հակադիր կողմերի միջև առաջացած հոգեկան լարվածության թուլացման նպատակով արդյունավետ է կիրառել դաստիարակչական հետևյալ տեխնոլոգիաները.

o Խմբային,

o Խաղային,

o Հաղորդակցական-վարժանքային,

o Հաջողության դիրքորոշման,

o Ձևավորող դաստիարակչական,

o Մտավոր գործողությունների ձևավորման:

Դասագործընթացում առաջացող դաստիարակչական բնույթի խնդիրների լուծման նպատակով վերոգրյալ բոլոր մեթոդների և տեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը դասավանդողից պահանջում է փուլային մոտեցում:

Դասավանդման մեր փորձից ելնելով կարող ենք ասել, որ պատմության դասագործընթացում առաջացող դաստիարակչական խնդիրները հիմնականում կրում են գործունային, վարքագծային և միջանձնային բնույթ: Դաստիարակչական գործունային խնդիրները որպես կանոն առաջանում են սովորողների կողմից այս կամ այն առաջադրանքը չկատարելու, հաճախակի բացակայությունների և պատասխանատվության զգացումի բացակայությունից: Դաստիարակչական վարքագծային խնդիրներն առավել հաճախ առաջանում են սովորողների անբավարար վարքի հետևանքով:

Ելնելով մեթոդիստներ Բ. Տ. Լիխաչովի, Էլիոտ Արոնսոնի, Ա. Մ. Տիմոշենկոյի, Ա. Ֆուրնհամի և Տ. Յազդանպանայի՝ այս ոլորտում կատարած հիմնարարար հետազոտություններից, կարող ենք առանձնացնել պատմության դասագործընթացում առաջացող դաստիարակչական խնդիրների լուծման տարբեր փուլերում մեր կողմից ընտրված դաստիարակչական տեխնոլոգիաների թիրախային գործադրման մակարդակները:

Իմ կարծիքով դաստիարակչական տեխնոլոգիաների վերաբերյալ տեղեկատվության էմպիրիկ ընկալման, յուրացման և վերարտադրման գործընթացով դրսևորվում է դրանց ընտրության և թիրախային կիրառման հարմարվողական– վերարտադրողական մակարդակը: Ուստի, դասավանդողը, ծանոթանալով դաստիարակչական տեխնոլոգիաների տեսական հիմքերին, կարողանում է առանձնացնել ոչ միայն դրանց կիրառման տեխնիկան, այլև ստեղծում է բարենպաստ մանկավարժական պայմաններ, այնուհետև դրսևորվում է դրանց ընտրության և թիրախային կիրառման կառուցողական-վերլուծական մակարդակը: Իսկ ահա ստեղծագործական–նորարարական մակարդակում դասավանդողը տիրապետում է դաստիարակչական տեխնոլոգիաների էությունը բացահայտելու, դաստիարակչական խնդիրն ախտորոշելու, լուծելու և ստացված արդյունքները ստեղծագործաբար օգտագործելու գործընթացներին:

Գլուխ 3

Արժեքային համակարգի դասավանդման օրինակ

Դասի թեման «Հայկ և Բել»

Դասի ուսուցանող նպատակը.

Իմանան՝ Ովքեր են Հայկը և Բելը, ինչ է արել Հայկը, ինչու է համարվում հայերի նահապետը:

Կարողանան՝ տարբերակել Հայկի և Բելի նպատակները, գտնեն թե ում քայլն էր ազնիվ և արդար:

Արժևորեն՝ Հայկի կատարած քայլը հայ ազգի համար:

Դասի զարգացնող նպատակը.

Աշակերտները պետք է հասկանան և արժևորեն Հայկ նահապետի քայլը, որով հիմք է դրվել հայկական պետականությանը:

Դասի դաստիարակչական նպատակը.

Աշակերտներին փոխանցել հայրենասիրության արժանիք:

Այս դասի ընթացքում աշակերտներին կարելի է փոխանցել ազնվության, հայրենասիրության, խիզախության արժեքները: Այս արժեքները շատ կարևոր է մարդու ձևավորման համար, ուստի անհրաժեշտ է այս ամենը երեխաներին սերմանել մանկուց: Հայրենասեր և ազնիվ մարդ ձևավորելով ձևավորում ենք առողջ հասարակություն:

<<Հայկ և Բել>> վիպերգն ուսուցանելիս ցանկալի է ցուցադրել Հայկի նկարը՝ լայնալիճ աղեղը ձեռքին: Պետք է շեշտել, որ Հայկի երեքթևյան նետը մեր ժողովրդի պատմության մեջ մնացել է որպես անվրեպության, քաջության խորհրդանիշ, և մեր նախնիները Հայկից են ժառանգել իրենց ուժն ու հայրենասիրությունը: Կարելի է երեխաների համար կարդալ Անդրանիկ Ղուկասյանի << Հայրենի ավանդավեպեր>> գրքից մի դրվագ.

-Թող հայտնի լինի քեզ, Բե՛լ,- խրոխտորեն ավելացրեց Հայկը,- որ ո՛չ ես, ո՛չ որդիներն ու թոռներն իմ և ո՛չ էլ մեկը Թորգոմանց տնից գլուխ չի խոնարհի քո առաջ:

Նա խոսքն ավարտեց, ուզեց, որ գնա:

-Սպասի՛ր,- ձայն տվեց Բելը,- դու գիտե՞ս, որ ընկնում են գլուխներն այն, որոնք չեն ուզում իմ գահի առաջ խոնարհվել:

Հայկն անվրդով սուրը մերկացրեց:

Ոչ ոք տեղից չշարժվեց: Հայկը դեպի դուռը դիմեց: Բազմությունը երկու մասի բաժանվեց, պատի պես կանգնեց ու ճանապարհ տվեց նրան:Դահլիճի դռան մոտ, մերկ սրերը ձեռքներին, սպասում էին Հայկի դիցակերպ որդիները՝ Արմենակը, Մանավազը, Հայկազն ու Սպահը: Նրանց դեմքերն այնքան վճռական էին, որ պատրաստ էին ամբողջ Բաբելոնին մարտահրավեր նետել: Նրանք անարգել դուրս եկան պալատից ու սուզվեցին գիշերային խավարի մեջ: Այդ օրն իսկ Հայկը որդիների, թոռների ու բոլոր Թորգոմյանների հետ թողեց Բաբելոնն ու բռնեց հայրենի աշխարհի ճանապարհը:

Դասի ընթացքում կարելի է գրատախտակին գծել «Վենի դիագրամ» գծապատկերը և գտնել Հայկի և Բելի նմանությունները և տարբերությունները, արժանիքները և թերությունները:



Դե իսկ դասի վերջում ավելի արդյունավետ կլինի օգտագործել «Կիսատ նախադասություններ» մեթոդը : Այս մեթոդը օգնում է աշակերտներին ամփոփել դասը:

Իր ընտրությամբ ուսուցիչը կարող է տալ նախադասություններից մեկը և ամփոփել դասը, կամ աշակերտը ինքը կարող է ընտրել նախադասությունը և պատասխանել:

Եզրակացություն

Այսպիսով առանձնացնենք նաև արժեք-արժանիքները, որոնք աշակերտների համար ոչ միայն կենսականորեն անհրաժեշտ բարիք են, այլ նաև ցանկալի հատկություն: Արժեք-արժանիքների ըմբռնումը կարևոր է <<անհատ-ազգ>> փոխհարաբերությունների կարգավորման առումով: Բոլոր անձնային հատկությունները հանդիսանում են տվյալ անձի արժանիքները, մասնավորապես < <հաստատակամություն>>, <<աշխատասիրություն>>, <<համբերատարություն>> և այլն: Պետք է տարբերակել ազգային արժանիքներ հասկացողությունը, որում առանձնանում է ազգային-պետական միաբանության ապահովումը: Միաբանության ապահովման մեջ վճռորոշ դեր են խաղում երեք հիմնական արժեք-արժանիքներ՝ արժանապատվություն, արդարամտություն, աշխատասիրություն: Արժանապատվությունը սեփական <<Ես>>-ի արժեքի գիտակցումն է: Դա անձի վարքի, արարքների, իրավունքների գնահատականն է, անձի ինքնագնահատականը: Ազգային արժանապատվությունը սեփական ազգի

արժանիքների, վաստակի, իրավունքների գիտակցումն է, ինքնահարգանքը՝ որպես ազգի ներկայացուցիչ: Արդարամտությունը այլոց ճշմարիտ, արդարացի գնահատումն է: Եթե արժանապատվությունը անձի հարգանքն է իր հանդեպ, ապա արդարադատությունը հարգանքն է ուրիշների հանդեպ: Այսպիսով արդարամտությունը ոչ միայն անդրադառնում է մեր սեփական ինքնագնահատականի վրա, այլ նաև ազդում է դրա վրա: Աշխատասիրությունը աշխատանքի հանդեպ անձի դրական վերաբերմունքն է: Այն բացառիկ կարևորություն ունի և առաջընթացի գլխավոր նախադրյալն է: Վերը նշված արժեք-արժանիքները խիստ փոխկապակցված են և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է որևէ էական խնդրի առաջացման: Այսպիսով պետք է հաշվի առնել, որ մշակույթն ու արժեքը չեն նույնանում, բայց և այնպես մշակույթում ստեղծված լավագույն հատկանիշը արժեքն է: Այն անհատներն ու ազգերը, որոնք ապրում են արժեքների գերակայությամբ, բարձր ոգեղեն հատկանիշներով ապրող ազգեր և անհատներ են, իսկ երբ նվազում են արժեքները վրա է հասնում ոգու սովը:Ոգեղենությունը պետք է հատուկ լինի բոլորին, հատկապես՝ մտավորականությանը, որը համարվում է ազգի ինտելեկտուալ խիղճը:

Գրականության ցանկ

1. Բաբանսկի Յու. Կ.<< Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում>>, Երևան, 1987թ:

2. Մուդրիկ Ա. Վ.<< Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում>>, Երևան, 1986թ

3.Ա. Գևորգյան <<Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում>> Երևան 2020 թ:

4. Ասատրյան Լ. <<Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն>>. ուսումնական ձեռնարկ, Երևան 2011թ:

5. Եփրիկյան Ա. << Մեթոդական ձեռնարկ>>, Երևան 2019 թ:

6. Խաչատրյան Ս. << Ուսուցման արդյունավետ հնարներ>>, Երևան 2020 թ:

7. Աֆորիզմներ:

8. Հանրակրթության պետական չափորոշիչ https://www.arlis.am/documentview

9. Առարկայական չափորոշիչներ.https://escs.am/am